

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
HISTORY AND PHILOLOGY
ИСТОРИЯ И ФИЛОЛОГИЯ

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ*

DOI:10.57155/KKGF8843

ԹԱԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԵՍԻ
ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Թագադրում, ծես, օծում, կանոն, ծիսակարգ, թարգմանություն, Կիրիկյան Հայաստան, Բյուզանդական կայսրություն:

Ներածություն

Հայոց եկեղեցու Հայր (կամ՝ Հայրապետական) Մաշտոց ծիսարանում՝ պահպանվել է թագադրության օծման ու թագադրության առնվազն երկու կանոն՝ տարբեր խմբագրություններով:

Հայոց արքայի թագադրության կանոններից մեկը, որով թագադրվել են Կիրիկյան հայկական պետության արքաները, կոչվում է «Կարգաւորութիւն աւրհնութեան թագաւորի ըստ մեծի եկեղեցւոյն Հռովմայ»²: Այս կանոնի հիմքում Սրբազան Հռոմեական կայսրության ինքնակալի թագադրության ծեսն է (Mainzer Krönungsordo, այսուհետև՝ Մայնցի կանոն՝ նույնանուն քաղաքում գրված լինելու համար)³, որը 1190 թ. լատիներենից հայերեն է թարգմանել XII

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, պ. գ. թ., vahetorosyan.matenadaran@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 30 նոյեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 5 դեկտեմբերի, 2025:

¹ Հայր Մաշտոցում են գետեղված նաև սուրբ մյուսոնի օրհնության, եպիսկոպոսի և կաթողիկոսի ձեռնադրության կանոնները:

² Անթ. 9, ք. 182ա-219ա: Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, կազմեց՝ Դանիելեան Անուշաւան վարդապետ, Անթիլիաս-Լիբանան, 1984, էջ 96-99: Սաի Հայր Մաշտոցի թագադրության կանոնի բնագրի լուսապատկերները տրամադրվելու համար շնորհակալություն եմ հայտնում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսությանը:

³ Schramm P. Ernst, Kaiser, Könige und Päpste. Gesammelte Aufsätze zur Geschichte des Mittelalters, Vol. 3, Stuttgart, 1969, S. 60): Մայնցի կանոնի և Սաի Հայր Մաշտոցի թագաւորահինեի կանոնի հետ դրա առնչության մասին տե՛ս Cyrille Vogel, Elze Reinhard, Le Pontifical, romano-germanique du dixième siècle, I: nn. I-XCVIII (1963), III: Introduction générale et tables, Vatican City: Biblioteca Apostolica Vaticana, 1972, pp. 246-259, 262-263;

դարի երկրորդ կեսի նշանավոր եկեղեցական գործիչ, Տարսոնի թեմի առաջնորդ Ներսես Լամբրոնացին⁴։ Ինչպես տեսնում ենք, Կիլիկյան կանոնի վերնագրում ևս արձանագրված է, որ այն Հռոմի կաթողիկ եկեղեցու թագավորօրհնեքի կանոնն է։ Այս կանոնի վաղագույն օրինակը պահպանվել է Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք Սսում գրված «Մաշտոց»-ում և թվագրվում է XIV դարի սկզբով⁵։ Այն այժմ պահվում է Մեծի Տանն Կիլիկի կաթողիկոսության ձեռագրերի հավաքածուում 9 համարի ներքո։

Թագադրության մյուս կանոնը, որն էլ քննել ենք սույն հոդվածում, կոչվում է «Կանոն թագաւոր ձեռնադրելոյ»։ Այս կանոնի վաղագույն օրինակը պահպանվել է Երուսաղեմի Հայոց պատրիարքության ձեռագրերի հավաքածուի թիվ 2673 Մաշտոցում, որը թվագրվում է 1294-ով⁶։ Այս ձեռագիրը նույնպես գրվել է Կիլիկյան Հայաստանում՝ Տարսոնի եպիսկոպոսությանը պատկանող Մլիճի վանքում՝ ի հիշատակ թեմի հանգուցյալ առաջնորդ Վարդան արքեպիսկոպոսի։

Հոգվածում անդրադարձել ենք այս կանոնի ծագմանը, մասնավորապես Բյուզանդիայի կայսրերի թագադրության ձեռի հետ ունեցած ընդհանրություններին ու տարբերություններին։ Փորձել ենք պարզել կանոնի ստեղծման ժամանակը և նպատակը։

Schramm P. Ernst, *Kaiser, Könige und Päpste*, S. 92-102; Peter Cowe, “The Inauguration of the Cilician Coronation Rite and Royal ideology,” *The Armenian Review*, winter, 45, 1992, p. 55; Ioanna Rapti, “Featuring the King: Rituals of Coronation and Burial in the Armenian Kingdom of Cilicia,” *Court Ceremonies and Rituals of Power in Byzantium and the Medieval Mediterranean Comparative Perspectives*, Eds. Alexander Beihammer, Stavroula Constantinou, Maria G. Parani (The Medieval Mediterranean Peoples, Economies and Cultures, 400–1500, volume 98), Leiden-Boston, 2013, p. 297; Gohar Grigoryan, “The ‘Just Judgement’ of King Lewon IV. Representational Strategies of Righteous Rulership in Cilician Armenia”, *Staging the Ruler’s Body in Medieval Cultures, A Comparative Perspective*, Edited by Michele Bacci, Gohar Grigoryan and Manuela Studer-Karlen, Harvey Miller publishers, 2023, pp. 79-116:

⁴ Պ. Անանեան, «Ներսէս Շնորհալի. միջեկեղեցական յարաբերութիւններ», *Բազմալէզ, 1996*, թիւ 1-4, էջ 219:

⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, էջ 96: Սսի Հայր Մաշտոցի թագադրոյցան կանոնի մասին տե՛ս մեր հետևյալ հոդվածները՝ «Ֆրանսիական հետերը Կիլիկիայի հայոց արհմեծի թագադրոյցան ձեռում», *ԲՄ* 38, 2024, էջ 32-47, «Դիտարկումներ Սսի Հայր Մաշտոցի «Թագադրութեան կանոն»ի շուրջ», *Հասկ հայագիտական տարեգիրք*, նոր շրջան, ԺԴ տարի, Անթիլիաս-Լիբանան, էջ 357-368:

⁶ Նդմ. 2673 էջ 258ա-306: Ձեռագրի թվային պատճենը ստանալու համար շնորհակալություն եմ հայտնում Երուսաղմի Հայոց պատրիարքությանը։

Ընդհանրություններն ու տարբերությունները Բյուզանդիայի կայսերի և Հայոց թագավորի թագադրության ծեսերում

Ի տարբերություն Սսի Հայր Մաշտոցի թագավորօրհնների կանոնի, «Կանոն թագաւոր ձեռնադրելոյ»-ն գրեթե դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Կանոնը վերջերս քննել է Գոհար Գրիգորյանն իր մի արժեքավոր հոդվածում⁷: Այս կանոնին հակիրճ անդրադարձել էր Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, մեծանուն հայագետ Հայր Ղևոնդ Ալիշանը: Իր «Յուշիկք հայրենեաց» աշխատության մեջ Հայոց Աշոտ Ա Բագրատունի (885-890 թթ.) արքայի թագադրության առթիվ Ղևոնդ Ալիշանը գրում է. «Ի՞նչ կարգաւ, ի՞նչ ծիսիւ, ի՞նչ աղօթքով կամ օրհնութեամբ եղաւ այս պսակս. արդեօք Ս. Սահակայ շարադրած և հին Հայոց ձեռով և գոչմամբ էր այս թագօրհնէքս, եթէ Գէորգ կաթողիկոս նոր շարագրեց, կամ թէ Յունաց կայսերաց ծիսին հետևեցան. — ասոնք՝ Հայկակ, քեզ այլ, ինձ այլ փափագելի են ի յայտնութիւն»⁸: Սակայն հաջորդիվ ներկայացնելով «Կանոն թագաւոր ձեռնադրելոյ»-ի բնագիրը՝ դրա «...և կոչեցեր զայս ... վերստին ի թագաւորութիւն, ի վերակացութիւն տանս Թորգոմայ» հատվածում՝ արքայի բաց թողնված անվան տեղում՝ փակագծերի մեջ, գրում է «Աշոտ» անունը, ինչը կարող է տպավորություն ստեղծել, թե Աշոտ Ա Բագրատունու թագադրությունը կատարվել է հենց այս կանոնով:

Գրելով հանդերձ, որ իրեն անհայտ է, թե ինչ կանոնով է տեղի ունեցել Աշոտ Ա-ի թագադրությունը՝ Ղևոնդ Ալիշանը, այդուհանդերձ, չի բացառում, որ այն կարող էր կատարվել բյուզանդական ծեսով:

Աշոտ Ա-ի թագադրության մասին միակ՝ քիչ թե շատ մանրամասն վկայությունն այդ իրադարձությանը ժամանակակից Հայոց կաթողիկոս և պատմիչ Հովհաննես Ե Դրասխանակերտցուն է (898-928 թթ.), ըստ որի՝ Գեորգ Բ Գառնեցի հայրապետը (876-897 թթ.) սուրբ յուզով օծելու փոխարեն միայն թագադրել է արքային. «կոչեցաւ ապա եւ մեծ հայրապետն Գէորգ եւ զհոգեւոր աւրհնութեանցն գովութիւնս աստուածայինս ի վերայ կատարեալ փոխանակ աւժման սրուակի իւղոյն, պսակեն զնա թագաւոր ի վերայ Ասքանազեան ազին»⁹: Առաջ անցնելով նշենք՝ որ «Կանոն թագաւոր ձեռնադրելոյ»-ում կա արքայի օծում, ինչը նշանակում է, որ Աշոտ Ա Բագրատունու թագադրությունը չէր կարող այդ կանոնով կատարված լինել:

⁷ G. Grigoryan, “The ‘Just Judgement’ of King Lewon IV”, pp. 79-116.

⁸ Ղևոնդ Ալիշան, Յուշիկ հայրենեաց, Բ. Ա., Վենետիկ-Ս. Ղազար, 1869, էջ 490:

⁹ Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, աշխ. Գ. Տէր-Վարդանեանի, «Մատենագիր հայոց», Բ. ԺԱ, Ժ դար, Պատմագրութիւն, Երկու գրքով, Գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 443:

Բագրատունյաց արքաների թագադրության մասին սակավ տեղեկություններ են պահպանվել, որոնք թույլ չեն տալիս հիմնավոր եզրահանգումներ անել այդ ծեսի բովանդակության վերաբերյալ:

Եթե Աշոտ Ա-ի թագադրության վրա բյուզանդական ծեսի ազդեցության մասին ենթադրությունը հիմնավոր փաստարկման կարիք ունի, ապա «Կանոն թագաւոր ձեռնադրելոյ»-ի Բյուզանդիայի կայսեր թագադրության կանոնից սերած լինելը հաստատվում է մի քանի էական համընկնումներով:

Համեմատությունը ցույց է տալիս, որ «Թագաւորի ձեռնադրութեան կանոն»-ի հիմքում Բյուզանդիայի կայսեր թագադրության կանոնն է (*Oratio in imperatoris inauguratione*), որը պահպանվել է բյուզանդական եկեղեցու ծիսական գրքերից՝ Եվխոլոգիոն (*Euchologion*)¹⁰: Ընդունված է կարծել, որ Եվխոլոգիոնի այս կանոնը գրեթե անփոփոխ կիրառվել է VIII դ. վերջից մինչև XII դ. ներառյալ¹¹:

Այսպես, բյուզանդական կանոնն սկսվում է հետևալ պարբերությամբ. «Այն բանից հետո, երբ թագավորել պատրաստվողը հագնում է բոլոր թագավորական հանդերձները՝ բացի քղամիդից, թագից և ճարմանդից (դրանք մի կողմ են դրվում սուրբ սեղանի վրա), կանգնում է ամբիոնին, նրա դիմաց կանգնում է պատրիարքը, և նա, որ պիտի պսակվի, կանգնում է կողքին, սարկավազն արտասանում է լիտանիան (*λατάνεια*, *litanía*), և ինքը խոնարհում է գլուխը, պատրիարքն աղոթք է ասում»¹²: «Կանոն թագաւոր ձեռնադրելոյ»-ն նույնպես սկսվում է արքայի զգեստավորման, ինչպես նաև սուրբ սեղանին՝ արծաթյա սկուտեղի վրա, քղամիդն ու թագը դնելու նկարագրությամբ. «Յետ զգենլոյ զամենայն թագաւորական հանդերձն, ուրոյն զքղամիդն և զթագն դնեն ի վերայ սրբոյ սեղանոյն արծաթի սկտեղք»¹³: Հայկական կանոնի այս հատվածում, փաստորեն, բացակայում է ճարմանդը:

Կայսեր հանդերձներն Եվխոլոգիոնի կանոնում նշված չեն, սակայն դրանք արձանագրված են Բյուզանդիայի կայսր Կոստանդին Միրանաժնի (913-959) «Արքունի արարողությունների գրքում»: Այսպես՝ եկեղեցի մուտք գործելուց

¹⁰ “Euchologion Sive Rituale Graecorum”, *Completens Ritus Et Ordines Divinae Liturgiae Officium Juxta Usus Orientalis Ecclesiae* (Latin Edition), ed. **Jacobus Goar**, 1647, pp. 924-927.

¹¹ **F. E. Brightman**, “Byzantine Imperial Coronations,” *The Journal of Theological Studies*, vol. 2, № 7 (April, 1901), p. 378.

¹² “Euchologion Sive Rituale Graecorum”, pp. 924-925. Թարգմանությունը կատարվել է հին հունարեն բնագրի լատիներեն զուգադիր թարգմանությունից: Լատիներեն տեքստի թարգմանության համար շնորհակալություն եմ հայտնում բ. գ. դ. Գոհար Մուրադյանին:

¹³ Եղմ. 2673, էջ 258ա:

հետո կայսրը գնում է հանդերձասենյակ և հանելով «սագիոնը» (σάγιον)¹⁴, հագնում է «դիվետեսիոն» (διβητήσιον)¹⁵ և «ցիցակիոն» (τσιτσάκιον)¹⁶: Այնուհետև պատրիարքն աղոթում է քղամիդի վրա, որից հետո դրանով զգեստավորում են կայսրին: Այնուհետև պատրիարքն աղոթում է Թագի վրա, որից հետո իր ձեռքով այն դնում է կայսեր գլխին՝ Թագադրելով նրան¹⁷:

Ի տարբերություն Կոստանդնուպոլսի պատրիարքի՝ Հայոց կաթողիկոսը քղամիդի և Թագի վրա աղոթք չի կարդում: Ինչպես սկզբում նշեցինք, հայկական կանոնը բյուզանդականի համեմատ ունի մի քանի տարբերություն: Այսպես, հայկական կանոնում քղամիդի և Թագի հիշատակումից հետո, ընթերցվում են 60-րդ, 124-րդ և 137-րդ սաղմոսները¹⁸, որոնք բացակայում են բյուզանդական կանոնում: Սաղմոսներից հետո, ինչպես որ բյուզանդական կանոնում է, հայրապետը կանգնում է Սուրբ սեղանի առջև՝ նորընծա Թագավորի հետևում, իսկ սարկավազը քարոզ է կարդում. «Եւ ելանէ հայրապետն առաջի սրբոյն սեղանոյն՝ կալով ի յետո նորա, որ պսակելոցն է: Յետ սաղմոսացն քարոզէ սարկավազն»¹⁹:

Հաջորդիվ, հայկական կանոնի համաձայն, եպիսկոպոսներից կամ քահանաներից մեկը, բռնելով արքայի աջ ձեռքը, նրան դարձնում է դեպի ժողովուրդը, և հայրապետն ասում է հետևյալը. «Աստուածային և երկնաւոր շնորհ հեղեալ առ ... կոչէ յաթոռ Թագաւորութեան տանս Թորգոմայ, աւծանիլ ըստ նմանութեան Կոստանդիանոսի և Թէոդոսի»²⁰: «Թորգոմի տուն»-ը միջնադարյան հայկական աղբյուրներում խորհրդանշում է Հայաստանը²¹: Այս հատվածը, բնականաբար, չկա բյուզանդական կանոնում²²: Դրանից հետո արքան շրջվում է դեպի սուրբ սեղանը, իսկ հոգևորականները կրկին սաղմոս (Թիվ 20) են կարդում:

¹⁴ Կարն թիկնոց, որը կայսրից բացի կրել են նաև զինվորականները (Constantine Porphyrogenetos, *The Book of Ceremonies* (Byzantina Australiensia), vol. 18, Translated by Ann Moffatt, Maxeme Tall, Brill, 2017, pp. 192-193, 834):

¹⁵ Նեղ թևերով երկար մետաքսե բանկոն, որը կայսրը կրել է արժանական հանդիսությունների ժամանակ: Կայսերական այս հանդերձը կրել են գոտիով, հավանաբար՝ մեկ այլ բանկոնի վրայից և փամիդի կամ սագիոնի տակից (նույն տեղում, էջ 192-193, 828):

¹⁶ Խազարական հագուստ, որը, ըստ ավանդության, բյուզանդական արժունիք է բերել Կոստանդին V կայսրի խազար կինը: Այս հանդերձը կայսրը կրել է սագիոնի վրայից (նույն տեղում, էջ 192-193, 836):

¹⁷ Constantine Porphyrogenetos, *The Book of Ceremonies*, pp. 192-193.

¹⁸ Եղմ. 2673, էջ 257-258:

¹⁹ Նույն տեղում, էջ 258:

²⁰ Այս հատվածն առկա է Սսի Հայր Մաշտոցի թագավորահմեմի կանոնում:

²¹ Ռ. Յականյան, «Տուն Թորգոմա»-ն սկզբնաղբյուրներում», *Արևելագիտությունը Հայաստանում*, հ. 3, 2007, էջ 174: Գ. Զանյան, «Միջնադարյան սկզբնաղբյուրները Թորգոմի, Թորգոմանց և Թորգոմանց Տան մասին», *ԼՀԳ*, 1990, հ. 11, էջ 34-35:

²² Անթ. 9, էջ 193ա:

Այնուհետև հնչում են թագավորին ու թագավորական իշխանությունը վերաբերող ընդարձակ հատվածներ Հին և Նոր Կտակարաններից (Ա Թագ. Ժ2, Ա Տիմ. Բ 1-8, Ա Յովհ. Բ 18-26, Սաղմ. ԺԹ, Ղուկ. ԺԹ 12-28), որոնք նույնպես առկա չեն բյուզանդական կանոնում: Աստվածաշնչյան մեջբերումներից հետո հայոց կաթողիկոսն ասում է այն նույն աղոթքը, որը կա նաև բյուզանդական կանոնում. «Տէր Աստուած մեր, որ թագաւորդ ես թագաւորաց, որ ի ձեռն Սամուէլի մարգարէի ընտրեցեր զծառայն քո զԴաւիթ և աւծեր զնա թագաւոր ի վերայ ժողովրդեան քում Իսրայէլի: Դու և այժմ լուր խընդրուածաց մերոց անարժանիցս, նայեա՛ ի սրբոյ բնակութենէ քումմէ և զհաւատարիմ ծառայս քո ..., զոր հաճեցար յարուցանել թագաւոր ի վերայ ազգի քո սրբոյ, զոր փրկեցեր պատուական արեամբ Միածնի Որդւոյ քո, աւծանիլ զսա արժանաւորեա իւղով ցնծութեան: Զգեցո՛ սմա զարուսթիւն ի բարձանց: Դի՛ր ի վերայ գլխոյ սորա պսակ ի քարէ պատուականէ: Շնորհեա՛ սմա երկայնութիւն աւուրց: Տո՛ւր աջով սորայ յաղթական փրկութիւն: Հաստատեա՛ զսա աթոռով արդարութեան: Շրջափակեա՛ զսա զինու. քո հոգւոյդ: Զաւրացո՛ զբազուկ սորայ, հնազանդեցո՛ սմա զամենայն բարբարոսական ազգս: Սերամենեա՛ ի սիրտ սորայ զերկիւղ քո և զսողութիւն կարեկցական: Հաստատեա՛ զսա ամբիժ հաւատով և վեր երևեցո զստուգութիւն պահպանութեան սրբոյ կաթողիկէ եկեղեցւոյ աւանդութիւն, զի դատեսցէ զժողովուրդս քո արդարութեամբ և զաղքատս՝ քո իրաւամբք, կեցուցէ զորդիս տնանկաց և ժառանգաւոր լիցի երկնից արքայութեանդ, քանզի քո է զարութիւն և փառք յաւիտեանս, Ամէն»²³:

Հայկական կանոնում հաջորդիվ կրկին շարունակվում են աստվածաշնչային ընթերցվածները (Գ Թագ. Ա 32-49, Գ Թագ. Թ, Իմաստ. Զ, Ես. ԿԱ, Ա Պետ. Բ 13-25, Ղուկ. Դ 14-22), որոնցից հետո կաթողիկոսը վերցնում է քղամիդն ու փիլոնը և տալիս քահանաներին, որպեսզի զգեստավորեն թագավորին. «Ապա առնու հայրապետն զքղամիդն և զփիլոնն ի սեղանոյն եւ տա ցքահանայսն և արկանեն զնովաւ: Եւ ի շուրջ առնուլ նորա զայն հայրապետն խաղաղութիւն տացէ ամենեցուն: Սարկաւագ ասէ. Աստուծոյ երկրպագեսցուք»²⁴:

Տարակուսանք է հարուցում քղամիդի հետ նաև փիլոնի հիշատակումը, որով քահանաները զգեստավորել են արքային: Ինչպես հայտնի է, քղամիդն ու փիլոնը նույնատիպ հանդերձներ են՝ առաջինը արքայի, երկրորդը՝ եկեղեցականի համար, ուստի դժվար է ասել, որ քահանաները երկուսով էլ զգեստավորել են նորընծա թագավորին: Մնում է ենթադրել, որ «Կանոն թագաւոր ձեռնադրելոյ»-ի վաղ օրինակներում փիլոնը հավանաբար նշվել է լուսանցքում՝ որպես

²³ Եղմ. 2673, էջ 273-276: Հմմտ. “Euchologion Sive Rituale Graecorum,” p. 925; **Reginald Maxwell Woolley**, *Coronation Rites*, Cambridge University Press, 1915, pp. 22-23.

²⁴ Եղմ. 2673, էջ 302:

քղամիդի, այսինքն՝ աշխարհիկ իշխանությունը խորհրդանշող զգեստին համարժեք, և հետագա ընդօրինակություններում հայտնվել բուն բնագրում:

Բյուզանդական կանոնի նույն մասում հիշատակվում են միայն քղամիդն ու ճարմանդը, իսկ քահանաների փոխարեն կայսրին զգեստավորում են հատուկ պաշտոնյաները՝ «վեստիտորները» (βεστίτωρες)²⁵, այսինքն՝ հանդերձապետները. «...պատրիարքը վերցնում է քղամիդն ու հանձնում հանդերձապետներին, նաև՝ ճարմանդը»:

Կայսրի և հայոց արքայի՝ քղամիդով զգեստավորումից հետո պատրիարքը և կաթողիկոսն ասում են. «Խաղաղություն ամենեցուն», իսկ սարկավազը՝ «Աստծուն երկրպագեսցուք»: Այնուհետև կաթողիկոսը կարգում է ևս մեկ աղոթք, որը նույնությամբ առկա է բյուզանդական կանոնում. «Քեզ՝ միայնոյ թագաւորիդ յաւիտենից, որ ի վերայ երկրի թագաւորութիւն ի քէն հաւատալով սմա խոնարհեցոյց զպարանոց իւր ընդ մեզ: Եւ արդ մեք խնդրեմք ի քէն Տէր Աստուած ամենայնի, պահեա՛ զսա ընդ հովանեաւ քո, զաւրացո՛ զսորա թագաւորութիւնս, և զհաճոյսն քո առնել յամենայն ժամ արժանաւորեա, ծագեա յաւուրս սորա արդարութիւն և բազում խաղաղութիւն, զի ընդ հանդարտութեամբ սորայ խաղաղապէս յապահովական կենցաղաւ բնակեցսուք ամենայն բարեպաշտութեամբ և ամբծութեամբ, զի լիցի թագաւոր խաղաղութեան: Եւ քեզ վա՛յել է փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ»²⁷:

Այս աղոթքին բյուզանդական կանոնում հաջորդում է ծեսի ամենագլխավոր դրվագը՝ թագադրումը, որը կատարում է պատրիարքը. «Այնուհետև պատրիարքը սեղանից վերցնում է թագը և դնում կայսեր գլխին, ասելով՝ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու»²⁸.

Բյուզանդականի համեմատ, հայկական կանոնը, ծեսի այս հատվածում ունի էական տարբերություն, որն արքայի օծումն է. «Ապա առնու հայրապետն զմիւռոնն սուրբ և աւծանէ զգլուխն և զճակատն ասելով՝ «Աւրհնեսցի, աւծի և սրբեսցի թագաւորս այս յանուն...»

Զայս երիցս ասէ բարձր ձայնիւ:

Եւ ժողովուրդն ասէ. «Տէր, կեցո զթագաւորս և լուր մեզ»»²⁹:

²⁵ Constantine Porphyrogenetos, *The Book of Ceremonies*, p. 836.

²⁶ “Euchologion Sive Rituale Graecorum,” p. 925; **Reginald Maxwell Woolley**, *Coronation Rites*, p. 23.

²⁷ Եղմ. 2673, էջ 303-304: Հմմտ. “Euchologion Sive Rituale Graecorum,” p. 925-926; **Reginald Maxwell Woolley**, B.D., *Coronation rites*, p. 23:

²⁸ “Euchologion Sive Rituale Graecorum,” p. 926; **Reginald Maxwell Woolley**, *Coronation rites*, p. 23.

²⁹ Եղմ. 2673, էջ 305:

Բյուզանդիայի կայսեր օծման խնդիրը բազմիցս քննության առարկա է եղել մասնագիտական գրականության մեջ: Ուսումնասիրողների մեծ մասը կարծում է, որ Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարում կայսեր օծումն առաջին անգամ տեղի է ունեցել խաչակրաց նվաճումից հետո՝ 1204 թ., Բալդուին I-ի թագադրության ժամանակ³⁰: Սակայն այս դեպքում օծվել է ոչ թե Բյուզանդիայի, այլ Կոստանդնուպոլիսը նվաճած խաչակիրների կայսրը: Հայտնի է, որ օծումը մինչ այդ եղել է Հռոմի կաթոլիկ եկեղեցու թագադրության ծեսում, որով կատարվել են եվրոպական ինքնակալների գահակալության արարողությունները: Խաչակիրների ազդեցությամբ, կայսեր օծումը, այնուամենայնիվ, մտել է նաև բյուզանդական ծիսակարգ, քանզի Նիկիայի առաջին կայսր Թեոդորոս I Լասկարիսը (1208-1222 թթ.) թագադրվելիս նաև օծվել է³¹:

Նորընծա թագավորին օծելուց հետո հայրապետը, ինչպես որ բյուզանդական կանոնում՝ պատրիարքը, սուրբ սեղանից երկու ձեռքով վերցնում է թագը և դնելով արքայի գլխին՝ թագադրում նրան. «Ապա առնու երկոքումք ձեռալքն զթագն հայրապետն ի սեղանոյն, պսակէ զնա և ասէ:

Աւրհնեցի և պսակեցի զթագաւորս այս³² ան[ուն] յանուն Հաւր և Որդ[ւոյ]:
Երիցս ասելով:

Եւ ժողովուրդն զնոյն վկայեն:

Եւ ապա ասէ. «Աւրհնութիւն և փառք Հաւր և Որդ[ւոյ]»»³³:

Ինչպես որ բյուզանդական ծեսում, հայկականում ևս թագադրումից հետո մատուցվում է պատարագ, որի ընթացքում կայսրը և հայոց թագավորը սուրբ հաղորդություն են ստանում³⁴:

Վերոնշյալ ընդհանրությունները թույլ են տալիս պնդել, որ «Կանոն թագավորի ձեռնադրելոյ»-ի հիմքում Բյուզանդիայի կայսեր թագադրության ծեսն է: Ինչ վերաբերում է տարբերություններին, ապա դրանք, ըստ ամենայնի, երկուսն են՝ աստվածաշնչյան ընթերցվածները և թագավորի օծումը, որոնք բացակայում են բյուզանդական կանոնում:

³⁰ Frank Brightman, "Byzantine Imperial Coronations", *The Journal of Theological Studies*, vol. 2, № 7 (April, 1901), p. 385.

³¹ Ionuț-Alexandru Tudorie, "Old and New in the Byzantine Imperial Coronation in the 13th Century", *Ostkirchliche Studien*, 60 (2011), № 1, p. 83; П. Жаворонков, «Избрание и коронация никейских императоров», *Византийский временник*, № 49, 1988, с. 55-59.

³² Բյուզանդական կանոնում պատրիարքը չի ասում «օրհնեցի և պսակեցի» բառակապակցությամբ:

³³ Եղմ. 2673, էջ 305-306:

³⁴ Reginald Maxwell Woolley, *Coronation Rites*, p. 24. Եղմ. 2673, էջ 306:

Թարգմանության ժամանակը, հեղինակն ու նպատակը

Ի տարբերություն Սսի Հայր Մաշտոցի թագավորությունների կանոնի՝ «Կանոն թագաւոր ձեռնադրելոյ»-ի թարգմանության ժամանակն ու հեղինակը, ցավոք, անհայտ են: Եվխովդիոնը, որում առկա է կայսեր թագադրության կանոնը, ինչպես նշվեց, կազմվել է VIII դ. վերջին և չնչին փոփոխություններով կիրառվել մինչև XII դ. ներառյալ: Տրամաբանական է կարծել, որ բյուզանդական կանոնի հայերեն թարգմանության անհրաժեշտությունն առաջացել է Հայոց արքայի թագադրության առիթով: Նշված ժամանակահատվածում VIII դ. վերջից մինչև XII դ. ներառյալ, ստեղծվել են Բագրատունյաց (885 թ.) և Կիլիկիայի հայկական թագավորությունները (1198 թ.):

Բագրատունի արքաների թագադրությունն առանձին քննության նյութ է, ուստի կբավարարվենք նշելով, որ այդ արարողության մասին բավարար տեղեկությունների, նկատի ունենք դրա բովանդակությունը ներկայացնող գրավոր աղբյուրների բացակայությունը, ցավոք, թույլ չի տալիս համեմատություն անցկացնել տվյալ ժամանակի (IX-XI դդ.) հայկական ու բյուզանդական ծիսական կանոնների միջև:

Այժմ դիտարկենք խնդրո առարկա կանոնի թարգմանության՝ Կիլիկիայի հայկական թագավորության ստեղծման ժամանակ կատարված լինելու հավանականությունը:

Կրկին նշենք, որ ինչպես Մայնցի կանոնի, այնպես էլ բյուզանդական ծեսի հայերեն թարգմանությունը կատարվել է ըստ անհրաժեշտության, այսինքն՝ հայոց արքայի թագադրության համար: Առաջինը, ինչպես արդեն գիտենք, արել է ներսես Լամբրոնացին 1190 թ. Լևոն Բ Ռուբինյանին Սրբազան Հռոմեական կայսրության ինքնակալ Ֆրիդրիխ Բարբարոսայի խոստացած թագով պսակելու համար: Այսինքն՝ կարող ենք պնդել, որ թագադրությունը պետք է կատարվեր թագ շնորհողի երկրում գործող ծեսով: Եթե պատճառաբանված է այս պնդումը, ապա ենթադրելի է, որ բյուզանդական ծեսով կարող էր թագադրվել հայոց այն արքան, որին Բյուզանդիայի կայսրը թագ էր շնորհել: Հայոց առաջին արքան, որին Բյուզանդիայի կայսրը թագ է շնորհել, նույն Լևոն Մեծագործն է: Բյուզանդիայի Ալեքսիոս III կայսրը նրան թագն ուղարկել է 1196 թ.³⁵: Լևոն Ա-ի թագադրությանը նվիրված մեր հոդվածում ցույց ենք տվել, որ նա 1198 թ. հունվարի 6-ին Տարսուի Սուրբ Սոֆիայի տաճարում թագադրվել է թե՛ Ալեքսիոս III-ի և թե՛ Սրբազան Հռոմեական կայսր Հենրի VI-ի շնորհած թագերով³⁶: Հայտնի է, որ Հենրի VI-ի տված թագով Լևոնին թագադրել է Սրբազան Հռոմեական կայսրու-

³⁵ Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ-Ս. Ղազար, 1956, էջ 207:

³⁶ Վ. Թորոսյան, «Կիլիկիայի Հայոց թագավոր Լևոն Մեծագործի թագադրման խնդրի շուրջ», *Էջմիածին*, 2016, թիվ է. էջ 65-83, թիվ ԺԲ, էջ 84-112:

թյան կանցլեր Կոնրադ Վիտելսբախը՝ բնականաբար Մայնցի կանոնով: Ինչ վերաբերում է բյուզանդական թագին, ապա դրանով Ռուբինյան իշխանին թագադրել է Հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը³⁷:

Զերծ մնալով վերջնական եզրահանգումից՝ կարծում ենք, որ առնվազն գոյություն իրավունք ունի այն տեսակետը, որ բյուզանդական ծիսամատյանից թագադրության կանոնը թարգմանել է ներսես Լամբրոնացին Լևոն Ա-ի թագադրության առթիվ, այսինքն՝ XII դ. վերջին:

Կանոնի՝ մինչև XII դ. վերջը հայերեն թարգմանված լինելու օգտին կարող է վկայել նաև այն հանգամանքը, որ Նիկիայի կայսր Թեոդորոս Լասկարիսի թագադրության ժամանակ վերջինս քղամիդը ոչ թե եկեղեցում է ստանում պատրիարքից, այլ դրանով զգեստավորվում է մինչև եկեղեցի գնալը³⁸: Այսինքն՝ Լասկարիսի ժամանակ ծեսը ենթարկվել էր որոշակի փոփոխության: Ինչպես տեսնում ենք, հայերեն կանոնում թագավորը քղամիդն ստանում է եկեղեցում, այսինքն՝ մինչև Լասկարիսի գահակալությունը եղած բնագրի համաձայն: Կարելի է կարծել, որ կանոնի հայերեն թարգմանությունը, ըստ ամենայնի, կատարվել է մինչև Թեոդորոս Լասկարիսի գահակալությունը:

Եզրակացություններ

Թագադրության բյուզանդական և հայկական կանոնների («Կանոն թագաւոր ձեռնադրելոյ»-ի) համեմատությամբ պարզվում է, որ վերջինիս հիմքում Բյուզանդիայի կայսեր թագադրության ծեսն է: Գործողությունների առումով, որոնք են՝ թագադրվողի հանդերձավորումը, քղամիդի և թագի սուրբ սեղանին դրվելը, թագադրումը, բյուզանդական ու հայկական կանոնները նույնական են: Հայկական կանոնը, ի տարբերություն բյուզանդականի, պարունակում է մեծ թվով մեջբերումներ Հին ու Նոր Կտարակարանների տարբեր գրքերից: Բյուզանդական կանոնից հաջորդ տարբերությունը, որն առկա է հայկական կանոնում, թագավորի օծումն է:

Բյուզանդական կանոնից հայերեն թարգմանությունը, ամենայն հավանականությամբ, կատարվել է XII դ. վերջին՝ Բյուզանդիայի կայսր Ալեքսիոս III-ի շնորհած թագով Կիլիկիայի հայկական պետության առաջին թագավոր Լևոն Ա-ի թագադրության նպատակով:

³⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Զ, յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1996, սյունակ 610-611, Ա. Մաքսույան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., Երևան, 1988, էջ 293:

³⁸ П. Жаворонков, «Избрание и коронация никейских императоров», с. 58.

VAHE TOROSYAN

**THE BYZANTINE ROOTS
OF THE ARMENIAN CORONATION RITE**

Keywords: Coronation, rite, anointing, canon, ritual, translation, Cilician Armenia, Byzantine Empire.

The Armenian Church's ritual book, the *Mashtots*‘, preserves two distinct coronation canons. The first, employed for the coronation of the kings of Cilician Armenia, is a translation of the coronation canon of the Holy Roman Empire. This translation was undertaken in 1190 by the prominent cleric Nersēs Lambronats‘i, who recorded about that in a colophon composed during that same year.

The second canon, entitled the “Canon of the Ordination of the King,” is identified in this article as derived from the coronation ceremony of the Byzantine emperor. The Armenian adaptation, however, diverges from its Byzantine model in significant respects. Notably, it incorporates numerous biblical quotations concerning kingship and royal authority and introduces the ritual of royal anointing, which is absent in the Byzantine prototype.

Concerning the translation of this Byzantine-derived canon, the most probable timeframe is the late 12th century. This dating is corroborated by the historical event of 1196, when the Byzantine Emperor Alexios III sent a crown to Levon II, Lord of Cilicia, and requested that he be crowned with it. It is presumed that the translation of the Byzantine canon of coronation into Armenian was conducted specifically for this purpose.

ВАГЕ ТОРОСЯН

**ВИЗАНТИЙСКИЕ КОРНИ
АРМЯНСКОГО ОБРЯДА КОРОНОВАНИЯ**

Ключевые слова: Коронация, обряд, помазание, канон, ритуал, перевод, Киликийская Армения, Византийская империя.

В ритуальном сборнике Армянской церкви «Маштоц» сохранились два различных канона коронации. Первый, использовавшийся для коронации царей Киликийской Армении, является переводом канона коронации Священной Римской империи. Этот перевод был выполнен в 1190 году видным церковным

деятелем Нерсесом Ламбронаци, который сообщает об этом в своём колофоне, составленном в том же году.

Второй канон, озаглавленный «Канон рукоположения короля», идентифицируется как производный от церемонии коронации византийского императора. Однако армянская адаптация значительно отличается от византийского оригинала. В частности, она включает в себя многочисленные библейские цитаты, касающиеся царей и царской власти, и вводит ритуал королевского помазания, который отсутствует в византийском прототипе.

Что касается перевода этого канона, происходящего из Византии, то наиболее вероятным временем его создания является конец XII века. Эта датировка подтверждается историческим событием 1196 года, когда византийский император Алексей III послал корону Левону II, правителю Киликии, и попросил короноваться этой короной. Предполагается, что перевод византийского канона коронации на армянский язык был сделан специально для этой цели.